

«Միխիթար Սեբաստացի» կրթահամալիր  
Տեխնոլոգիա

Ընտրությամբ գործունեության մշակված այս ծրագիրը երկրորդից հինգերորդ դասարանցիների համար համար նույնն է, պարզապես նույն ծրագիրն ամեն մի տարիքային խմբի հետ իրեն համապատասխան բարդության ենթ կատարում:

Ծրագրում ներառված է՝

● **Խեցեգործություն-քանդակ** իր բոլոր փուլերով՝ կավի ծեփում, քանդակում, հարթեցում-մշակում, ջնարակում, թրծում: (Կավով աշխատանքն առավել կարևոր է, քանի որ ծեփելիս մատների միջոցով շոշափելիքի զգայարաններն ավելի արագ են զարգանում, որն էլ նպաստում է ուղեղի զարգացմանը): Բացի այդ, երեխաները իրենց վառ երևակայությունը կարողանում են արտահայտել կավի միջոցով: Պատկերացում են կազմում կլոր քանդակի, հարթաքանդակի մասին, ծանոթանում են դեկորատիվ կիրառական զարդարվեստի նմուշներին և դրանց հիման վրա փորձում ստեղծագործել: Կավագործությունը ստեղծագործ և ճկուն միտք է պահանջում:

Կավը բնական նյութ է, այն հայտնի է արարչագործության սկզբից, երբ Աստված ստեղծեց երկիրը, ստեղծեց նաև հողը, իսկ կավը հողի մի տեսակ է:

● **Աշխատանք թափոնով**-կենցաղային անպիտան իրերից կոլաժների, շրջանակների, գրչամանների և նմանատիպ նմուշների ստեղծում: Այն իրենից ներկայացնում է շատ հետաքրքիր աշխատանք, զարգացնում երեխայի մտավոր ունակությունները և ազատ մտածողություն թելադրում: Ինչպես նաև դրանց գործածության շնորհիվ ստեղծվում են աշխատանքներ, որոնք էլ իրենց հերթին կարող են օգտագործվել ինտերիերի ձևավորման մեջ:

● **Տիկնիկագործություն**-կտորից, թելերից, կոճակներից և տարբեր թափոններից կերպարների կերտում: Երեխաների կատարած նախնական էսքիզային տարբերակները մշակվում և դառնում են կիրառական: Հենց դրա հիման վրա յուրաքանչյուրը կարող է ունենալ իր անձնական հագուստը և մասնակցել կրթահամալիրում տեղի ունեցող ծիսական տոներին: Նպատակն այն է, որ յուրաքանչյուր աշակերտ՝ իր իսկ մտքերի շնորհիվ կարողանա յուրովի ներկայացնել ինքն իրեն հասարակության մեջ: Ինչպես նաև նախապատրաստել ինքնուրույն աշխատանքային կյանքին, դաստիարակել կիրթ, ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի

● **Աշխատանք նկարչության տարբեր ուղղություններով**-էսքիզ, նատյուրմորտ, բնանկար, դիմանկար և այլն: Երեխաները ծանոթանում են դրանց և կարողանում տարբերակել, սովորում են կառուցել և լուծել կոմպոզիցիոն խնդիրներ: